


# Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՀՄ

2009 թ. թիվ 10

### 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ՆՈՒՅՆՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՈՒՆԵՆԱ ՈՐԱԿՅԱԼ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՂՆԵՐ

2008թ. հոկտեմբերի 30-ի Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության համագումարը ուղերձով դիմեց Հայաստանի Հանրապետության նախագահին, ազգային ժողով և վարչապետին քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բարձրացման հարցով: Չնայած, որ հարցը քննարկվեց վերոնշյալ ատյաններում՝ աշխատավարձի բարձրացում տեղի չունեցավ:

2009 թ. հունիսի 5-ի թիվ 5 նախագահության նիստում կրկին անգամ քննարկվեց հարցը և որոշվեց նորից դիմել ՀՀ վարչապետին՝ առաջարկելով 2010թ. պետական բյուջեում նախատեսել քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ  
պարոն Տ. ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն վարչապետ

Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն քաղաքացիական ծառայողների կողմից բազմաթիվ ահազանգեր են հասնում իրենց բազային աշխատավարձի բարձրացման պահանջի վերաբերյալ:

Պահանջը իրոք արդարացի է՝ նվազագույն աշխատավարձի չափը հանրապետությունում 2009 թ. հունվարից սահմանվել է 30000 դրամի չափ, նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկված է մոտ 36500 դրամ, իսկ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը մնացել է անփոփոխ՝ 40000 դրամ: Նշված պաշտոնային դրույքաչափը քաղաքացիական ծառայողներին չի խթանում բարձրացնելու իրենց որակավորումը, աշխատելու ավելի արդյունավետ և առավելագույն չափով իրականացնելու սեփական հնարավորությունները:

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 28-ի թիվ 380-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ “Կառավարությունը պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով մտադիր է զգալիորեն ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը՝ աշխատանքի որակը և աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով մասնավոր հատվածին...”, սակայն ներկայումս քաղաքացիական ծառայողների աշխատավարձը ոչ միայն անմրցունակ է մասնավոր հատվածի համեմատ, այլ նաև չի ապահովում աշխատողի և նրա ընտանիքի բավարար կենսամակարդակը, ինչպես նախատեսված է ՀՀ Սահմանադրության 34 հոդվածում:

Հաշվի առնելով, որ գազի գնի թանկացման և դրամի արժեքազրկման հետ փոխկապակցված թանկացել են ջրի, էլեկտրաէներգիայի, կենսապահովման առաջին անհրաժեշտության և բոլոր՝ հատկապես ներմուծվող, ապրանքների գները՝ ՃՀՄ նախագահության անունից դիմում եմ Ձեզ խնդրանքով հնարավոր սահմաններում 2010 թ. պետական բյուջեում նախատեսել քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացումը :

ՃՀՄ նախագահ

Ե. Հակոբովա

Ստորև տպագրում ենք Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի նամակը ի պատասխան Ե. Հակոբովայի գրությանը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի գրությունը՝ ուղղված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Գ. Պետրոսյանին:

### *Հարգելի տիկին Հակոբովա*

Քննարկելով ՀՀ վարչապետին ուղղված Ձեր 2009թ. հունիսի 17-ի թիվ 49-01 գրությունը, հայտնում ենք հետևյալը. համաձայն ՀՀ Կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1932-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը յուրաքանչյուր տարի, մինչև օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետության Կառավարություն է ներկայացնում հաջորդ բյուջետային տարում քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության ու վարձատրության համակարգի մասին զեկույց (այսուհետ՝ Ջեկույց): Դեռևս 2008 թվականի Ջեկույցում մանրամասն վերլուծվել էր պետական (մասնավրապես քաղաքացիական ծառայության համակարգի) և մասնավոր հատվածների աշխատավարձերի զգալի տարբերությունները, քաղաքացիական ծառայության համակարգում կադրերի բարձր հոսունությունը (01.01.2007-01.01.2008թթ. քաղաքացիական ծառայության համակարգում կադրերի հոսունությունը կազմել էր 11.7%), ինչպես նաև քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի միջև եղած տարբերությունները: Վերլուծության արդյունքները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2008թ. ապրիլի 28-ի N380-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 4.2.1 կետի դրույթը (այն է՝ ՀՀ կառավարությունը պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով մտադիր է զգալիորեն ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը, աշխատանքի որակը և աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով մասնավոր հատվածին՝ միջնաժամկետ հատվածում ձեռնպահ մնալով աշխատողների թվի ավելացումից) հիմք ընդունելով՝ Ջեկույցում առաջարկվել էր քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը 2009 թվականի սահմանել 65000 դրամ, մինչդեռ համաաշխարհային տնտեսական ճգնաժամի հնարավոր ազդեցությունը հաշվի անելով, քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացում տեղի չունեցավ:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությունը համատեղ քննարկվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որը, բարձրացված հարցը համարելով արդիական, քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացումը 2010 թվականի համար իրատեսական չի համարում՝ նկատի ունենալով, որ տնտեսությունում ոչ բնական՝ դժվար կանխատեսվող զարգացումների ծավալման պայմաններում հնարավոր չէ հստակ պատկեր կազմել առաջիկա տարիների զարգացման արդյունքների մասին:

ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքը կցվում է:

Հարգանքով Գ. Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության  
աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարար  
պարոն Գ. Պետրոսյանին

Ի կատարումն ՀՀ վարչապետի  
2009թ. հունիսի 19-ի N 02/14.2/4075-09  
հանձնարարականի

### *Հարգելի նախարար*

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկել է Հայաստանի պետիկմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ե. Հակոբովայի գրությունը՝ հանրապետությունում ապրանքների գների թանկացման և հանրային ծառայությունների սակագների բարձրացման հանգամանքով պայմանավորված քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի չափը բարձրացնելու վերաբերյալ, և հայտնում է, որ բարձրացվող հարցը իհարկե արդիական է, սակայն նկատի ունենալով, որ տնտեսությունում ոչ բնական՝ դժվար կանխատեսվող

*գարգացումների ծավալման պայմաններում հնարավոր չէ հստակ պատկեր կազմել առաջիկա տարիների գարգացումների արդյունքների մասին, հայտնում ենք, որ բազային աշխատավարձի բարձրացումը 2010 թվականի համար իրատեսական չենք համարում:*

**Հարգանքով՝**

**Տ. Դավթյան**

**Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Կ Ա Պ Ե Ր**

2009 թ. ապրիլի 16-ին ք.Մոսկվայում կայացավ ԱՄՖ խորհրդի նիստը, որին մասնակցում էր նաև ԱՄՖ խորհրդի անդամ ՃՀՄ նախագահ Ե.Հակոբովան: Նիստին քննարկվեցին հետևյալ հարցերը՝ 2008թ. ԱՄՖ-ի աշխատանքային պլանի կատարումը, ԱՄՖ-ի 2008թ. ֆինանսական հաշվետվությունը, ԱՄՖ-ի խորհրդի 2007թ. 4 ամսվա և 2008թ. ֆինանսատնտեսական գործունեության վերստուգման արդյունքների մասին, ԱՄՖ-ի անդամ կազմակերպությունների անդամավճարի չափի և վճարման կարգի մասին հարցերը: Որոշվեց նաև կազմակերպել

միջազգային սեմինար-խորհրդակցություն «Արհմիությունների կազմակերպչական ամրապնդումը-ժամանակի պահանջը» թեմայով: Սեմինարը կկայանա Մոսկովսկի քաղաքում: Հայաստանի ներկայացուցիչների համար նախատեսվեց 3 տեղ: Անվտիվեցին նաև արհմիության անդամների թվաքանակի ավելացման համար հայտարարված մրցույթի արդյունքները՝ լավագույն կազմակերպություն ճանաչվեց Ադրբեջանի պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական միությունը:

**Հ Ա Մ Կ Ը Ե Վ Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Մ Ի Գ Ր Ա Յ Ի Ա Ն**

2009 թ. մայիսի 4-ին, 5-ին Ծաղկաձորի «Նարեկ» հյուրանոցում կայացավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված սեմինարը «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի համար հմտությունների զարգացման ուսուցում արհմիությունների միջոցով միգրանտ աշխատողների պաշտպանության և արժանապատիվ աշխատանքի ապահովման ուղղությամբ»: Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից սեմինարին մասնակցեցին Աշտարակի տարածքային միության նախագահ Մարիա Մաթևոսյանը և Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահության անդամ, ՀԱՄԿ-ի մշտական գործող երիտասարդական հանձնաժողովի անդամ Գայանե Բաղայանը:

Սեմինարի ժամանակ տրվեց Հայաստանում միգրացիոն իրավիճակի ընդհանուր բնութագիրը: ԱՄԿ աշխատանքի միջազգային ստանդարտների մասնագետ Ալեյն Պելանն ներկայացրեց միգրացիայի ոլորտին վերաբերող աշխատանքի միջազգային նորմերը: ՀԱՄԿ-ի թրաֆիկինգի և միգրացիայի ծրագրի փորձագետ Էլեն Մանասերյանը ներկայացրեց ՀԱՄԿ-ի

դիրքորոշումը և մոտեցումը, նաև արհմիությունների դերը այս հարցում: Ելույթ ունեցավ նաև ԱՄԿ արհմիությունների մասնագետ Ստե Տոֆտ Պետերսենը միգրանտ աշխատողների իրավունքների մասին արժանապատիվ աշխատանքի շրջանակներում:

Աշխատանքային միգրացիայի ընդհանուր բնութագիրը Ռուսաստանի Դաշնությունում, Ռուսաստանի Դաշնության միգրացիայի քաղաքականությունը, նորմատիվ իրավական ակտերը ներկայացրեց «Միգրացիան 21-րդ դարում» հիմնադրամի ծրագրերի համակարգող Իննա Մատվենան:

Փաստորեն, 1991-1998թթ. ժամանակահատվածի համար կատարված հետազոտության արդյունքում Հայաստանում արտաքին միգրացիոն հոսքը գնահատվել է 760-780 հազար մարդ: Սա կազմում է 1991 թվականի բնակչության գրեթե 20 տոկոսը: Այնուամենայնիվ, բացարձակ արտագաղթը կտրուկ նվազել է 1992-1994 թթ. իր գագաթնակետի համեմատությամբ: 2002-2005 թթ. ժամանակահատվածի վերաբերյալ ԵԱՀԿ հետազոտությամբ պարզվել է, որ հարցմանը մասնակցած աշխատանքային միգրանտների գրեթե 90 տոկոսը նպատակակետ երկիր ընտրել է Ռուսաստանը: Նրանցից ավելի քան 40 տոկոսը հաստատվել է Մոսկվայում: Այսպիսով՝ միգրացիոն հոսքի ամենակարևոր մասը կազմում են աշխատանքային միգրանտները: Տարեկան 60000 աշխատանքային միգրանտներ զբաղվածության

նպատակով մեկնում են Ռուսաստան, հիմնականում շինարարության ոլորտում: Ռուսաստանի Դաշնությունում հաշվարկվում են 1,5 միլիոն հայ միգրանտներ:

Աշխատաշուկայի գլոբալ զարգացումները և դեպքերի աճող թիվը, երբ միգրանտ աշխատողները աշխատանքային օրենքների լավատումների հետևանքով դառնում են զոհեր, ընդգծում են արհմիությունների կենսական դերը միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության հարցում: «Կայուն համագործակցություն Ռուսաստանի Դաշնությունում, կովկասում և Միջին Ասիայում աշխատանքային միգրացիայի արդյունավետ կառավարման համար» ԱՄԿ ծրագրի նպատակներից մեկը՝ խթանել արժանապատիվ աշխատանքը և ուժեղացնել միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանությունը

խտրականության դեմ պայքարի հարցում: Այս նախաձեռնության միջոցով ԱՄԿ-ն կաջակցի Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիային միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության աշխատանքում: Նախաձեռնությունը ունի երկու փոխկապակցված բաղադրիչներ.

1. ՀԱՄԿ-ի հմտությունների զարգացում
2. Տեղեկատվության կամ խորհրդատվության ապահովում ՌԴ մեկնող միգրանտ աշխատողների համար:

Երկրորդ բաղադրիչը կիրականացվի գործող միգրանտների աջակցման կենտրոնների միջոցով /ՄԱԶԾ և միգրացիայի գործակալության կողմից ստեղծված/, որպեսզի առավելագույնին հասցվի արդյունավետությունը: Տեղեկատվությունն ուղղված կլինի արհմիություններին անդամակցությունը և աշխատանքային իրավունքներին:

## ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՆ

- 2009 թվականին տեղի են ունեցել հաշվետու-ընտրական համաժողովներ Հրազդանի և Միսիանի տարածքային միություններում՝ Հրազդանի տարածքային միության նախագահ վերըտրվեց Կարեն Մարգարյանը, Միսիանի տարածքային միության նախագահ ըտրվեց Գագիկ Գրիգորյանը: Հաշվետու-ընտրական ժողով տեղի ունեցավ նաև Հայաստանի պատմության թանգարանում, նախագահ վերընտրվեց Մարիետա Կիրակոսյանը
- Գյումրու տարածքային միությունը որոշում կայացրեց ՃՀՄ կազմից դուրս գալու մասին
- Մարտի 28-29-ին Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում տեղի ունեցավ սեմինար Աշտարակի տարածքի ՃՀՄ անդամ կազմակերպությունների արհմիության ակտիվի համար “ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի կիրառումը” թեմայով: Սեմինարին

մասնակցեցին նաև ՀԱՄԿ-ի և ՀՀ աշխատանքի պետական տեսչության մասնագետները:

- Հունիսի 30-ին և հուլիսի 1-ին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացավ սեմինար ՃՀՄ համակարգի արհմիության 22 երիտասարդ ակտիվիստների համար “Արհմիությունների մոտիվացիան” թեմայով: Սեմինարը վարեցին ՀԱՄԿ-ի Ուսումնահետազոտական կենտրոնի երիտասարդ մասնագետներ Իրինա Մանուկյանը և Էլեն Մանասերյանը:
- ՃՀՄ անդամ կազմակերպությունները համալրվեցին ևս մեկով: Մեզ միավորվեց Երևանի “Զատիկ” մանկատան աշխատողների արհեստակցական կազմակերպությունը, որի նախագահն է Կարինե Հակոբյանը:
  - ՀԱՄԿ-ը և նրա անդամ ճյուղային միությունները տեղափոխվեցին նոր մասնաշենք: Մեր նոր հասցեն է՝ 0010, ք. Երևան, Վ.Մարգարյանի 26/3, սեն. 501, 502, 503:

## Հ Ա Ր Ց ՈՒ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

**Հարց. Անձր աշխատանքի է ընդունվել 3 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանը սվարտվելուց հետո արդյո՞ք անհրաժեշտ է վերանայել պայմանագիրը կամ կնքել նորը:**

Փորձաշրջան կարող է սահմանվել ինչպես գործատուի, այնպես էլ աշխատողի կողմից: Փորձաշրջանի ժամկետը անցնելուց հետո անձը համարվում է փորձաշրջանը անցած: Դրանից հետո նոր աշխ.պայմանագիր կնքելու անհրաժեշտություն չի զգացվում և գործում է մինչև փորձաշրջան սահմանելը կնքված աշխ.պայմանագիրը: